միջնով և աւանացեալ գերութեամբ Հրէից զոր ած նա 'ի Պաղեստինեայ, և այցելութեամբ Թադէի առաքելոյ պատուական և սրբեալ, կրկին և մեծապէս պայծառացաւ յելս Թ դարու և 'ի սկիզբն ԺԽ, բազմապատիկ և մեծավայելուչ շինութեամբք Դագկայ արքայի, որ և ապարանս հովանաւորս և ամրոցս շինեաց 'ի նմա ամենազան գրուագեալ զարդուք, զորս ջուրցն ծածկեալ հետախուզել արարեալ է. բայց կանգուն կայ Ս. Խաչ եկեղեցին շինեալ հրամանաւ Նորա և ձեռնտուութեամբ յամն 915–921, որ բոլորշի խաչաձեւութեամբն և բարձրակառոյց գմբեթաւն վայելչացեալ՝ զարմանալի ևս է և միակ ընդ ամենայն Հայս՝ պատկերքն սրբոց և անասնոց և բուսոց՝ որովք համակ քանդակեալ ծածկեալ են արտաքին երեսք քարանց եկեղեցւոյն, Ճարտարեալք 'ի Մանուէլէ կրօնաւորէ արուեստագիտէ. յորս թէպէտ և ոչ երևի նրբութիւն, այլ ազդուութիւն և Ճոխութիւն և վաստակ բազում. Ճոխագոյն ևս էր ապաստաւք և արծաթի զարդուք և գեղանկար պատկերօք ներքին եկեղեցւոյն, որ արդ մերկացեալ է. իբր 64' են երկայնութեան նորա և 50' լայնութեան. և քարինքն բերան 'ի հեռաստանէ 'ի հարաւոյ գաւառին Բաղնշու 'ի Կոպոմ անուանեալ գեղջէ, ուր ազգ կռապաշտ Զուրարիկ անուն ապաստանէր 'ի բերդ հզօր, զոր առեալ և քանդեալ Դագկայ՝ նաւով խաղացոյց այսր զքարինսն. 'ի վերայ հարաւային դրան եկեղեցւոյն կայ աղօթատեղի Թադաւորին, որոյ հին մուտք կամ սանդուխք ծածկեալ են. կիսաեղծ է և հին արձանագիրն. զանգակատունն և ժամատունն նորաշէնք են: Նորաշէն է և մենաստանն, յորում նստի Կաթուղիկոս ինքնագլուխ յաւուրց անտի Դագկայ արքայի, սնընդհատ յաջորդութեամբ 113 Տէրանց կացեալ յաթոռն մինչև ցայժմ. որոց թեմ ամփոփեալ արդ՝ ունի զՀարաւակողմն ծովուն և զարևելս մինչև յելս սահմանաց Հայոց: Զկնք արդ այլ շինուած նշանաւոր 'ի կղզւոջն, բայց մատրունք անշուքք և ամայիք, և գերեզմանք հարանց տեղւոյն, և ամրոց մի փոքր մատրամբ հանդերձ 'ի հարաւոյ կուսէ կղզւոյն՝ արդ անջատեալ 'ի նմանէ ալեաք ծովուն. և վէմ մի բևռագիր բերեալ այլուստ և եդեալ առ դրամբ եկեղեցւոյն. նա և 'ի բուսաբերութենէ զուրկ է կղզին ապառաժ գոլով: — Ժամաւ և կիսով յարևմտից Աղթամարայ կայ Աւաբեր կղզեակ անբնակ խոտավար. և ասի այսպէս կոչեցեալ վասն երևելոյ անդ Տիրամօրն առ Ս. Գրիգոր Նարեկացի և ընծայելոյ առ նա զՑէրն կուսածին: — Ի փող կամ 'ի ստորև պարանոցաձև մասին ծովուն կայ Կոռ-ոյ կղզի քարաժայռ, և բնակարան անապատակեաց միանձանց, Ս. Կարապետ եկեղեցեաւ. և վերագոյն 'ի ծայր պարանոցին կայ Լիմ մեծագոյն կղզեացն, կիսաժամաւ հեռի 'ի ցամաքէ, Ս. Գէորգ եկեղեցեաւ, և անապատաւ միաբանից՝ զոր հաստատեաց Ներսէս վարդապետ Մոկացի յամին 1622, և միաբանքն են իբրև 50 թուով, արք խստակրօնք, աղօթակացք անձանձիրք, նոյնպէս և կտուցայն. առ սոսա անթերի պահին նախնեացն կարգեալ սահմանք ժամակարգութեանց և օր ըստ օրեայ սաղմոսաց: Երկոցուն ևս անապատացն են 'ի մերձակայ եղեր ցամաքին Դրսի տունք իբրև հիւրանոցք կամ օթի տունք, ուր գեռահասակ նորընծայք մարզին և ապա անցանեն 'ի կղզին: Ի Լիմ՝ քանզի ընդարձակ է և գիւր՝ յաջողի և մշակութիւն. յամին 1847 ապստամբեալք Պէտերիսանայ յարձակեցան 'ի Դրսի տուն և 'ի կղզին Լիմայ, 'ի վտանգի կացուցանելով զմիաբանսն, որոց հայր էր Տէր Գաբրիէլ այժմեան առաջնորդն Վանայ:

94. Արևելակողմն վիճակին Վանայ յայնկոյս լերանց Վարագայ մինչև 'ի սահմանն Պարսից՝ երկիր սակաւածանօթ է. յորում նշանաւորք և յայտնիք են Հաւլիկ վիճառ համանուն գիւղիւ 100 տամբք Հայոց, դառնահամ ջրով և մանր ձկամբք, յերից կողմանց պատեալ 'ի լերանց և արձակ յարևելեան դիմէն. այս թուի Ծովէն ազի և մանրաձուկն՝ առ որով դադարեաց Հայկն նահապետ ազգիս մերոյ 'ի խաղալն 'ի վերայ Բելայ. քանզի և հուլ առ կռան կայ տեղի շահատակութեան հսկայիցն այնոցիկ արանց և հռչակագոյնն և առաջին դաշտ Ճակատամարտի, 'ի ՀԱՅՈՑ ՁՈՐ վիճակի. որ ձգի յելից կուսէ և 'ի հարաւոյ Ճիս և լերանց Վարագայ, ձորադաշտ ընդարձակ և երկայն 'ի միջավայր երկայնաձիգ լերանց՝ որք բոլորին ընդ հարաւ արևմտից 'ի Խօշապ կոյս, և ընդ մէջ անցանէ Հրդեհ գետ որ այժմ Խօշապ կոչի. սփռեալ են 'ի դաշտին գիւղորայք Հայոց, յորոց մի է և Աւաբաժալէն կոչեցեալ վերագոյն անուամբ քան զամենայն շէնս աշխարհիս, դաստակերտ գիւղախառն հօրս Հայոց, որում ազդեալ ասեն անդ Աստուծոյ և ցուցեալ զարդեն և զնեա. և շինեալ քաջին բերդ յերկայնանիստ քարակաւուր բլրին որ կայ յերի գեղջն 'ի մտից կուսէ անջատ և մեկնակ. և ցարդ կան մընացուածք բերդին՝ որ յիւր անուն Հայկաբերդ կոչի խարսխեալ 'ի դագաթան քարաբլրին հսկայակերպ տաշածոյ վիմաք մեծամեծօք, և փոս փորեալ 'ի միջի 'ի քարաժեռին: — Են 'ի ձորադաշտին և մենաստանք անշքացեալք, որպէս Խէթոոյ Վանք, և 'ի հիւսիսոյ նորա և վիճակին Աբրահամ Խոռոնանոյ, այն է աշակերտն Ղեւոնդեանց, զորմէ Ճառէ Եղիշէ, և գերեզման նորա 'ի նմին: — Ի հարաւոյ Հայոց Ձորոյն կայ ԽՕՇԱՊ վիճակ, քաղաքաւանաւ յաջմէ համանուն գետոյն, աւերակ մզկիթաք, բաղանեաք և կամրջաք, կալեալ 'ի Քրդաց, որոց բեկ ինքնագլուխ նստէր 'ի Մահմոպէ բերդի յապառաժի բարձու, շինեալ 'ի ԺԵ դարու, և նեղէր զսահմանս Վանայ, մինչև ընդաւաձեցաւ յՕսմանեանց յամին 1847: — Ի հարաւոյ կուսէ Խօշապայ կայ ՔԱՐՊԱՀ վիճակ, որ է երկիր ԱՆՁԵՒԱՑԵԱՑ գաւառի, յորում անուանի և հին ուխտատեղին Հոգոյ Վանք շինեալ 'ի Բարթուղմեայ առաքելոյ 'ի պատիւ Վերափոխման Տիրամօրն, զորոյ և զպատկեր փայտեայ զձեռագործ Յովհաննու Աւետարանչի՝ եդ 'ի նմա, և ցարդ թուի լինել անդ, այլ անշքացեալ և անծանօթացեալ է տեղին:

95. Հարաւակողմն ծովուն Վանայ ՌԾՏՈՒՆԵԱՑ երկիրն է, որ այժմ ՈՍՏԱՆ և ԳԱՒԱՌ կոչի, երկայնաձիգ պարու լերանց զատուցեալ յաշխարհէն Մոկաց: Ի հարաւոյ գետոյն Խօշապայ և յարևելից հարաւոյ ծովուն Վանայ ձգի բարձր և ծաղկաւէտ լեառն